

ԿՈՆՎԵՆՑԻԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

Եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և
հարկումից խուսափելու կանխելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իտալիայի
Հանրապետության կառավարությունը,
ցանկանալով կնքել եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հար-
կումը բացառելու և հարկումից խուսափելու կանխելու մասին Կոնվենցիա,

համաձայնեցին հետևյալ միջոցառումների մասին.

Գլուխ I Կոնվենցիայի գործողության շրջանակները

Հոդված 1 Անձինք, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան

Սույն Կոնվենցիան կկիրառվի Պայմանավորվող պետություններից մեկի կամ
երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2 Հարկեր, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան

1. Սույն Կոնվենցիան կկիրառվի յուրաքանչյուր Պայմանավորվող պետության կամ
նրա վարչատարածքային կամ վարչական միավորների կամ տեղական իշխանության
մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ
դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի
կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը՝
ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամուտների,
ձեռնարկությունների կողմից վճարված աշխատավարձի կամ ոռմիկի ընդհանուր
գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելածի նկատմամբ հարկերը:

3. Կոնվենցիան կկիրառվի, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի
նկատմամբ.

ա) Հայաստանի դեպքում՝

1. շահութահարկ,
- 2.

Եկամտահարկ,

3. գույքահարկ,
4. հողի հարկ,
անկախ նրանից՝ դրանք հավաքվել են աղբյուրի մոտ գանձելու միջոցով,
թե այլ կերպ,

(այսուհետև՝ հայկական հարկ):

- թ) Իտալիայի դեպում
1. անհատական եկամտահարկ (l'imposta sul reddito delle persone fisiche),
2. ձեռնարկություններից գանձվող եկամտահարկ (l'imposta sul reddito delle persone giuridiche),
3. արտադրական գործունեությունից գանձվող տարածաշրջանային (ռեզիոնալ) հարկ (l'imposta regionale sulle attivita produttive),
անկախ նրանից՝ դրանք հավաքվել են աղբյուրի մոտ գանձելու միջոցով, թե այլ կերպ,

(այսուհետև՝ իտալական հարկ):

4. Սույն Կոնվենցիան կկիրառվի նաև նույնական կամ ըստ էության համանման ցանկացած հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները հարմար ժամկետներում կծանուցեն միմյանց իրենց համապատասխան հարկային օրենսդրության մեջ կատարված էական փոփոխությունների մասին:

Գլուխ II Սահմանումներ

Հոդված 3 Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Կոնվենցիայում, եթե համատեքստը այլ բան չի պահանջում.
 - ա) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն,
 - թ) «Իտալիա» տերմինը նշանակում է Իտալիայի Հանրապետություն,
 - զ) «Պայմանավորվող պետություն» և «մյուս Պայմանավորվող պետություն» տերմինները, համատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Իտալիա,
 - դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,
 - ե) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավորում, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,
 - զ) «Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից դեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից դեկավարվող ձեռնարկություն,
 - է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող պետությունում որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված դեկավարություն ունեցող ձեռնարկության կողմից շահագործվող ծովային նավով կամ օդանավով, բացառությամբ այն դեպքերի, երբ ծովային նավը կամ օդանավը շահագործվում է բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող վայրերի միջև,

«ազգային անձինք» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող բոլոր ֆիզիկական անձինք,

ii) բոլոր իրավաբանական անձինք, ընկերակցությունները և միավորումները, որոնք Պայմանավորվող պետության գործող օրենսդրության հիման վրա ստացել են իրենց այդ կարգավիճակը,

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար և պետական եկամուտների նախարար կամ նրանց լիազոր ներկայացուցիչ,

ii) Խոտակայի դեպքում՝ էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություն:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն Կոնվենցիան ցանկացած պահի կիրառվելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե համատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ Պայմանավորվող պետության օրենսդրությամբ տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Կոնվենցիան:

Հոդված 4 Ոեզիդենտ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը, այդ Պետության օրենսդրության համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության վայրի, հիմնադրման վայրի, դեկավարման վայրի կամ նման բնույթի որևէ այլ չափանիշի հիման վրա: Սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որը ենթակա է հարկման այդ Պետությունում՝ միայն այդ Պետության ադրյուներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:

2. Եթե 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ.

ա) նա կիամարվի այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի իր մշտական կացարանը: Եթե նա ունի իր մշտական կացարանը երկու Պայմանավորվող պետություններում, ապա կիամարվի այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) Եթե հնարավոր չէ որոշել այն Պայմանավորվող պետությունը, որտեղ նա ունի իր կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չունի իր մշտական կացարանը, ապա կիամարվի այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որտեղ ստվորաբար բնակվում է,

գ) Եթե նա ստվորաբար բնակվում է երկու Պայմանավորվող պետություններում կամ նրանցից և ոչ մեկում չի բնակվում, ապա կիամարվի այն Պայմանավորվող պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է հանդիսանում,

դ) Եթե նա երկու Պայմանավորվող պետությունների ազգային անձն է կամ և ոչ մեկինը չէ, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները վերոհիշյալ անձի կարգավիճակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Եթե 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների ռեզիդենտ, ապա նա կիամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ գտնվում է նրա՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ
օժտված

ղեկավարությունը:

Հոդված 5 **Մշտական հաստատություն**

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որտեղ ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

- ա) ղեկավարման վայր,
- բ) մասնաճյուղ,
- գ) գրասենյակ,
- դ) գործարան,
- ե) արտադրամաս,
- զ) հանքահոր, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման այլ վայր,
- է) շինարարական հրապարակը կամ շինարարությունը կամ հիմնադրման ծրագիրը, որոնք գոյություն ունեն ավելի քան ինն ամիս:

3. «Մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը՝ ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես պահեստավորման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը՝ բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի օգտագործումը՝ ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի՝ բացառապես գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի օգտագործումը՝ ձեռնարկության համար՝ բացառապես գովազդի, տեղեկության տրամադրման, գիտական հետազոտությունների կամ նախապատրաստական կամ օժանդակ բնույթի նմանատիպ այլ գործունեություն իրականացնելու նպատակով:

4. Անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է 5-րդ կետը) տարրերվող՝ մի Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության անունից գործող անձը կհամարվի մշտական հաստատություն ունեցող առաջինը հիշատակված Պետությունում, եթե նա ունի և սովորաբար օգտագործում է այդ Պետությունում ձեռնարկության անունից կոնտրակտներ կնքելու իրավասություն՝ բացառությամբ, երբ նրա գործողությունները սահմանափակվում են ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնումներով:

5. Սի Պայմանավորվող պետության ձեռնարկությունը չի համարվում մյուս Պայմանավորվող պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ այդ մյուս Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոբերի, սովորական կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով, որտեղ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում: Սակայն սույն կետի իմաստով այդ անձը չի դիտարկվի որպես անկախ

կարգավիճակով գործակալ, եթե այդ գործակալի գործունեությունը ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ իրականացվում է այդ ձեռնարկության անունից:

6. Այն փաստը, որ **Պայմանավորվող պետության ռեզիդենտ** հանդիսացող ընկերությունը վերահսկում է մյուս **Պայմանավորվող պետության ռեզիդենտ** հանդիսացող ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս **Պետությունում** (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին որևէ ընկերության չի վերածում մյուսի մշտական հաստատության:

Գլուխ III Եկամուտների հարկումը

Հոդված 6 Եկամուտ անշարժ գույքից

1. **Պայմանավորվող պետության ռեզիդենտի** կողմից մյուս **Պայմանավորվող պետությունում** գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից ստացված եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս **Պետությունում**:

2. «Անշարժ գույք» տերմինի նշանակությունը սահմանվում է այն **Պայմանավորվող պետության** օրենսդրությանը համապատասխան, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը, ամեն դեպքում, ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները: Անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի ու այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման համար փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները նույնականացնելու համար անշարժ գույք: Ծովային նավերը, նավակները և օդանավը անշարժ գույք չեն համարվի:

3. 1-ին կետի դրույթները կկիրառվեն անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալության տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կկիրառվեն նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

Հոդված 7 Հահույք ձեռնարկատիրական գործունեությունից

1. **Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը** ենթակա է հարկման միայն այդ **Պետությունում**, եթե այդ ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում մյուս **Պայմանավորվող պետությունում** այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս **Պետությունում**, բայց միայն այն շափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. աշվի առնելով 3-րդ կետի դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որը նա կարող էր ստանալ՝ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեություն՝ լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս բույլատրվում է նվազեցում համարել մշտական հաստատության նպատակների համար կատարված փաստացի ծախսերը՝ ներառյալ կառավարական և ընդհանուր վարչական ծախսերը ինչպես այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ այլ վայրերում:

4. Այնքանով, որքանով Պայմանավորվող պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարրեր ստորաբաժանումների միջև բաշխելու հիման վրա, 2-րդ կետի ոչ մի դրույթ չի խոչընդոտի այդ Պայմանավորվող պետությանը՝ հաշվառելու ընդունված բաշխման եղանակի հիման վրա հարկման ենթակա շահույթը: Այնուամենայնիվ, ընդունված բաշխման եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը՝ այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքներ կամ արտադրանք գնելու պատճառով:

6. Նախորդ կետերի կիրառման դեպքում մշտական հաստատությանը վերագրվող շահույթը ամեն տարի կորոշվի միևնույն եղանակով, եթե հակառակն անելու համար չկա հիմնավոր և բավարար պատճառ:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդի այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8 Նախագծություն և օդային տրանսպորտ

1. Միջազգային փոխադրումներում ծովային նավերի կամ օդանավի շահագործումից ստացված եկամուտը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված դեկավարությունը:

2. Եթե նավարկություն իրականացնող ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված դեկավարությունը գտնվում է նավի վրա, ապա այն կիամարվի գտնվող այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է նավի գրանցման նավահանգիստը կամ, եթե չկա այդպիսի նավահանգիստ, այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է նավի կառավարիչը:

3. 1-ին կետի դրույթները կկիրառվեն նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում
կամ

միջազգային շահագործման գործակալությունում մասնակցությունից
առաջացած շահույթի նկատմամբ:

Հոդված 9 **Ասոցացված (զուգորդված) ձեռնարկություններ**

1. Երբ՝

ա) Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության դեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության դեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կստեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Երբ Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում ենթարկվել է հարկման, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիմեր առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ հարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կկատարի այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը կկատարվի միայն սույն Կոնվենցիայի 26-րդ հոդվածով նախատեսված փոխհամաձայնեցման ընթացակարգին համապատասխան:

Հոդված 10 **Շահարաժիններ**

1. Պայմանավորվող պետության ռեգիլենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեգիլենտին վճարված շահարաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահարաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որի ռեգիլենտն է հանդիսանում շահարաժիններ վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենսդրության համաձայն, բայց եթե ստացողը շահարաժինների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի.

ա) շահարաժինների համախառն գումարի 5 տոկոսը, եթե շահարաժինների փաստացի սեփականատերը հանդիսանում է այն ընկերությունը, որը ուղղակիորեն տնօրինում է
շահարաժիննե

թ վճարող ընկերության կապիտալի առնվազն 10 տոկոսը (այդ մասը պետք է լինի 100,000 ԱՄՆ դրամ կամ այլ տարադրամով այդ գումարին համարժեք գումար) շահարաժինների հայտարարման ժամկետից առաջ առնվազն 12 ամսվա ժամանակաշրջանում,

բ) շահարաժինների համախառն գումարի 10 տոկոսը՝ մնացած բոլոր դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն տվյալ սահմանափակման կիրառման եղանակը:

Սույն կետը չի ազդի ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահարաժինները:

3. «Շահարաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից, «օգտագործման» բաժնետոմսերից կամ «օգտագործման» իրավունքներից, հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ այլ՝ պարտապահանջ չհանդիսացող՝ շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև այլ բաժնետիրական իրավունքներից եկամուտ, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից ստացված եկամուտը՝ համաձայն այն Պետության հարկային օրենսդրության, որի ուղղիունուն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե շահարաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ծեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահարաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի առնչությամբ վճարվում են շահարաժինները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում շահարաժինները ենթակա են հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում՝ նրա օրենսդրությանը համապատասխան:

5. Եթե Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը չի կարող գանձել որևէ հարկ ընկերության կողմից վճարված շահարաժինների նկատմամբ, բացառությամբ, եթե այդպիսի շահարաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահարաժինները, իրականում կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ

կայուն բազայի հետ և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահարաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11 Տոկոսներ

1. Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին

Վճարված տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են՝ այդ Պետության օրենսդրության համաձայն, բայց եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն տվյալ սահմանափակման կիրառման եղանակը:

3. Անկախ 2-րդ կետի դրույթներից՝ տոկոսները ազատվում են հարկումից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջացել են, եթե՝

ա) տոկոսներ վճարողը այդ Պայմանավորվող պետության կառավարությունն է կամ տեղական իշխանության մարմինը, կամ

բ) մյուս Պայմանավորվող պետության կառավարությանը կամ տեղական իշխանության մարմնին կամ որևէ գործակալությանը կամ հաստատությանը (ներառյալ ֆինանսական հաստատությունը) վճարված տոկոսները ամբողջությամբ տնօրինվում են այդ մյուս Պայմանավորվող պետության կամ տեղական իշխանության մարմնի կողմից, կամ

գ) որևէ այլ գործակալությանը կամ հաստատությանը (ներառյալ ֆինանսական հաստատությունը) վճարված տոկոսները կապված են Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրի իրականացմամբ տրվող փոխառությունների հետ, կամ

դ) բանկային հաստատության կողմից տրամադրված, ներկայացնողի փաստաթղթերով չներկայացված, ցանկացած բնույթի փոխառության տոկոսներ են:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ կառավարական արժեթղթերից, պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից՝ անկախ հիպոքերային ապահովումից և անկախ շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, ինչպես նաև բոլոր այլ գումարները (եկամուտները), որոնք ընդգրկված են փոխառության փողերից առաջացած եկամուտում՝ համաձայն այն Պետության հարկային օրենսդրության, որտեղ առաջանում են եկամուտները:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում տոկոսները ենթակա են հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում՝ համաձայն վերջինիս օրենսդրության:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն այդ Պետությունն է, վարչատարածքային կամ վարչական միավորը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող

ող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ժամանելու կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

7. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հասուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարված տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կվիրառվեն միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

Հոդված 12

Ո՞յալթի

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին վճարված ոոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Այնուամենայնիվ, այդպիսի ոոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այն առաջանում է՝ այդ Պետության օրենսդրության համաձայն. սակայն եթե ստացողը ոոյալթի փաստացի սեփականատերն է, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի ոոյալթի համախառն գումարի 7 տոկոսը:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ կորոշեն տվյալ սահմանափակման կիրառման եղանակը:

3. «Ո՞յալթի» տերմինը սույն հոդվածում կիրառվելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի փոխառություն, որը ստացվում է որպես վճարում գրական, արվեստի կամ գիտական աշխատանքների, ներառյալ համակարգչային ծրագրերի, կինոնկարների, հեռուստատեսային կամ ռադիո հաղորդումների հեռարձակման համար ֆիլմերի կամ ձայներիգների, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, դիզայնի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ էլ արդյունարերական, առևտրային կամ գիտական սարքավորումների օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար կամ արդյունարերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվի, եթե ոոյալթի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ոոյալթին, այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և

իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում է ոռյալթին, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում ոռյալթին ենթակա է հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում վերջինիս օրենսդրության համաձայն:

5. Ոռյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողը այդ Պետությունն է, վարչատարածքային կամ վարչական միավորը, տեղական իշխանության մարմինը կամ այդ Պետության ռեգիդենտը: Սակայն եթե ոռյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեգիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն կամ կայուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ոռյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ոռյալթի վճարման ժախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ կայուն բազան, ապա այդպիսի ոռյալթին կհամարվի առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

6. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ոռյալթի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կկիրառվեն միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը կմնա հարկման ենթակա, յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

Հոդված 13

Գույքի արժեքի հավելած

1. 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված անշարժ գույքի օտարումից ստացած արժեքի հավելածը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է այդ գույքը:

2. Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով ունեցած կայուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելածը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի կայուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելածը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում ծովային նավերի կամ օդանավի շահագործումից կամ այդպիսի ծովային նավերին կամ օդանավին վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելածը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված դեկավարությունը:

4. Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից այն ընկերությունում բաժնետոմսերի կամ այլ

կորպորատիվ իրավունքների օտարումից ստացվող արժեքի հավելանը, որի ակտիվները հիմնականում բաղկացած են մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պետությունում:

5. 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նշված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելանը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարողը:

Հոդված 14 **Անկախ անհատական ծառայություններ**

1. Մասնագիտական ծառայություններից կամ նման բնույթի այլ անկախ գործունեությունից Պայմանավորվող պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե նա մյուս Պայմանավորվող պետությունում իր գործունեությունն իրականացնելու համար սովորաբար իր տրամադրության տակ չունի կայուն բազա: Եթե նա ունի այդպիսի կայուն բազա, այդ եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում, սակայն միայն այն չափով, որը վերագրելի է այդ կայուն բազային:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, հատկապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների և հաշվապահների անկախ գործունեությունը:

Հոդված 15 **Կախյալ անհատական ծառայություններ**

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, ոռճիկը և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե՝

ա) ստացողը ֆիսկալ տարվա ընթացքում սկսվող կամ ավարտվող ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում գտնվում է մյուս Պետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում մյուս Պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ կայուն բազան:

3. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային նավի

կամ օդանավի վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված դեկավարությունը:

Հոդված 16 Տնօրենների հոնորարներ

Որպես մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի կամ ընկերության այլ համանման մարմնի անդամ՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17 Արտիստներ և մարզիկներ

1. Չնայած 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ այն եկամուտը, որը Պայմանավորվող պետության ռեգիդենտը ստացել է որպես արվեստի գործիչ՝ թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստ կամ երաժիշտ կամ որպես մարզիկ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացրած իր անհատական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի գործիչ կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անհատական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչ կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած 1-ին և 2-րդ կետի դրույթներին՝ 1-ին կետում հիշատակված գործունեության արդյունքում արվեստի գործիչ կամ մարզիկի ստացած եկամուտը ազատվում է հարկից այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այդ գործունեությունն իրականացվում է, եթե այդպիսի գործունեությունն իրականացվում է Պայմանավորվող պետությունների կառավարությունների միջև համաձայնեցված մշակութային կամ սպորտային փոխանակման շրջանակներում և չի իրականացվում շահույթ ստանալու նպատակով:

Հոդված 18 Կենսաքոշակներ

1. Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարված կենսաքոշակները և այլ համանման վարձատրությունները, կապված նախկին վարձու աշխատանքի հետ, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Եթե

Պայմանավորվող պետության ռեգիլենտը դառնում է մյուս Պայմանավորվող պետության ռեգիլենտ, ապա առաջինը հիշատակված Պետությունում աշխատանքից ազատվելու դեպքում այդ ռեգիլենտի՝ որպես աշխատանքից ազատվելու վերջնահաշիվ (փոխհատուցում) ստացած վճարները կամ համանման միանվագ վճարները ենթակա են հարկման միայն առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում: Սույն կետում «աշխատանքից ազատվելու վերջնահաշիվ (փոխհատուցում)» արտահայտությունը ներառում է ցանկացած վճար, որը կատարվում է որևէ գրասենյակի գործունեության դադարեցման կամ աշխատանքից անձի ազատվելու դեպքում:

Հոդված 19 **Պետական ծառայություն**

1. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային կամ վարչական միավորման կամ տեղական իշխանության մարմնի կողմից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ վարչատարածքային կամ վարչական միավորմանը կամ տեղական իշխանության մարմնին մատուցված ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաբոշակից տարբերվող վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում, և այդ Պետության ռեգիլենտ հանդիսացող ֆիզիկական անձը՝

i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձը, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեգիլենտ՝ բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային կամ վարչական միավորման կամ տեղական իշխանության մարմնի կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից որևէ ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը կամ նրա վարչատարածքային կամ վարչական միավորմանը կամ տեղական իշխանությանը մատուցված ծառայությունների համար վճարված որևէ կենսաբոշակ ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաբոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ազգային անձը ու ռեգիլենտը:

3. 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կկիրառվեն մի Պայմանավորվող պետության կամ նրա վարչատարածքային կամ վարչական միավորման կամ տեղական իշխանության մարմնի կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց ստացված վարձատրությունների կամ կենսաբոշակների նկատմամբ:

Հոդված 20 **Որոքեսորներ և ուսուցիչներ**

Այն
այրոքեսորը

կամ ուսուցիչը, որը համալսարանում, քղեջում, դպրոցում կամ այլ կրթական հաստատությունում ուսուցանելու կամ հետազոտական աշխատանք կատարելու նպատակով երկու տարին չգերազանցող ժամկետով ժամանակավորապես այցելում է Պայմանավորվող պետություն, և որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում ազատվում է հարկ վճարելուց այդպիսի ուսուցանման կամ հետազոտական աշխատանքի դիմաց ստացած վարձատրության առնչությամբ:

Հոդված 21 Ուսանողներ

Ուսանողը կամ փորձնակը, որը հանդիսանում է կամ անմիջապես մինչև Պայմանավորվող պետություն ժամանելը հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, և որը գտնվում է առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով, այդ Պետությունում չի հարկվում իր ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար ստացած վճարումների համար, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 22 Այլ եկամուտ

1. Պայմանավորվող պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չհիշատակված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարրերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անհատական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող կայուն բազայի միջոցով, և գույքը կամ իրավունքը, որի առնչությամբ վճարվել է եկամուտը, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ կայուն բազայի հետ: Այդ դեպքում եկամտի տարրերը ենթակա են հարկման այդ մյուս Պայմանավորվող պետությունում՝ վերջինիս օրենսդրության համաձայն:

3. Եթե 1-ին կետում նշված եկամուտը ստացվում է հատուկ հարաբերությունների մեջ գտնվող անձանց կողմից իրականացված գործունեության հետևանքով, և այդ գործունեության համար կատարվող վճարումը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր անկախ անձանց միջև, ապա 1-ին կետի դրույթները կկիրառվեն միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի գերազանցող մասը ենթակա է հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն՝ նկատի ունենալով սույն Կոնվենցիայի մյուս դրույթները:

Հոդված 23

Գույք

1. 6-րդ հոդվածում նշված՝ անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող պետության ռեզիդենտի կայուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային նավերով և օդանավով ներկայացված գույքը և այդպիսի ծովային նավերի և օդանավի շահագործմանը վերաբերող շարժական գույքով ներկայացված գույքը հարկվում են միայն այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է ձեռնարկության՝ որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված դեկավարությունը:

4. Պայմանավորվող պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Գլուխ IV

Կրկնակի հարկման բացառման մեթոդները

Հոդված 24

Կրկնակի հարկման բացառումը

1. Համաձայնեցված է, որ կրկնակի հարկումը կբացառվի սույն հոդվածի հետևյալ կետերի համաձայն:

2. Հայաստանի դեպքում.

Եթե Հայաստանի ռեզիդենտը եկամուտ է ստանում կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել Իտալիայում, ապա Հայաստանը թույլատրում է այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում Իտալիայում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով, և այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում Իտալիայում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով: Սակայն երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգանաքներից կախված, վերագրվում է եկամտին կամ գույքին, որը կարող է հարկվել Իտալիայում:

3. Իտալիայի դեպքում.

Եթք Իտալիայի ռեզիլիենտը տնօրինում է եկամտի տարրերը, որոնք ենթակա են հարկման Հայաստանում, ապա Իտալիան սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված իր եկամուտների հարկերը հաշվարկելիս կարող է հաշվի առնել վերը հիշատակված եկամտի տարրերը, եթե սույն Կոնվենցիայի առանձին դրույթներն այլ բան չեն պահանջում:

Այդ դեպքում Իտալիան այդպիսով հաշվարկված հարկերը կնվազեցնի Հայաստանում վճարված եկամտի հարկի գումարի չափով, սակայն այդ գումարը չպետք է գերազանցի վերը նշված իտալական հարկի համամասնությունը, որը եկամտի այդպիսի տարրերն ընդգրկում է ամբողջ եկամտի մեջ:

Սակայն ոչ մի նվազեցում չի թույլատրվի, եթե եկամտի տարրը Իտալիայում հանդիսանա աղբյուրի մոտ վերջնական հարկման առարկա՝ վերը նշված եկամուտը ստացողի պահանջով, Իտալիայի օրենսդրության համաձայն:

4. Եթք սույն Կոնվենցիայի որևէ դրույթին համապատասխան՝ Պայմանավորվող պետության ռեզիլիենտի ստացած եկամուտը կամ տնօրինած գույքը այդ Պետությունում ազատվում է հարկից, ապա այդ Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդ ռեզիլիենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկից ազատված եկամուտը կամ գույքը:

Գլուխ V Հատուկ դրույթներ

Հոդված 25 Անխտրականություն

1. Պայմանավորվող պետության ազգային անձինք չեն ենթարկվի մյուս Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք նույն հանգամանքների դեպքում: Այս դրույթը, չնայած 1-ին հոդվածի դրույթներին, կլիրառվի նաև Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիլիենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:

2. Մյուս Պայմանավորվող պետությունում Պայմանավորվող պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումն է: Այս դրույթը չպետք է մեկնարանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝ մյուս Պայմանավորվող պետության ռեզիլիենտներին հարկման նպատակներով այնպիսի անհատական գեղչեր, նվազեցումներ և պակասեցումներ տրամադրելու, որոնք Պայմանավորվող պետությունը տրամադրում է իր ռեզիլիենտներին՝ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

3. Բացառությամբ այն դեպքերի, եթք կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները, մի Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեզիլիենտին վճարված տոկոսները, ռոյալթին և այլ վարձատրությունները, այդպիսի ձեռնարկության հարկով շահույթի որոշման նպատակով, ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչ որ առաջինը հիշատակված Պետության ռեզիլիենտին վճարելիս: Նմանապես, մի Պայմանավորվող պետության

ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեգիլենտին, այդ ձեռնարկության հարկվող կապիտալի որոշման նպատակով, ենթակա կլինի նվազեցման նույն պայմաններով, ինչ որ առաջինը հիշատակված Պետության ռեգիլենտին պարտք լինելիս:

4. Պայմանավորվող պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ քանի ռեգիլենտների կողմից, չեն ենթարկվի առաջինը հիշատակված Պայմանավորվող պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան այն հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն են, որոնց ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

5. Չնայած 2-րդ հոդվածի դրույթներին՝ սույն հոդվածի դրույթները կկիրառվեն բոլոր տեսակի և բնույթի հարկերի նկատմամբ:

6. Սակայն սույն հոդվածի նախորդ կետում նշված դրույթները չեն սահմանափակում հարկումից խուսափելու և հարկման բացառման վերաբերյալ ներքին օրենսդրության դրույթների կիրառումը:

Հոդված 26 Փոխհամաձայնեցման ընթացակարգ

1. Այն դեպքում, եթե անձը կարծում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ռեգիլենտն է հանդիսանում, կամ, եթե իր գործը վերաբերում է 25-րդ հոդվածի 1-ին կետին, այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե դիմում-բողոքը համարվում է արդարացի, և եթե իրավասու մարմնինը ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա կձգտի գործը վճռել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով:

Զերք բերված ցանկացած համաձայնություն իրականացվում է՝ անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությունում առկա որևէ ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմնները սույն Կոնվենցիայի մեկնարանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած տարածայնություններ կամ կասկածներ կձգտեն լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ՝ սույն Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու

նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով: Եթե համաձայնության գալու համար նպատակահարմար է կարծիքների բանավոր փոխանակումը, ապա այդպիսի փոխանակումը կարող է տեղի ունենալ Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված Հանձնաժողովի միջոցով:

5. Նախորդ կետերում նախատեսված դեպքերում, եթե Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները համաձայնության չեն գալիս կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ այդ մարմիններից մեկին առաջին անգամ գործը ներկայացվելուց հետո երկու տարբա ընթացքում, և հարկատուն(երր) համաձայնում է (են) միջնորդ դատարանի որոշումների պարտադիր լինելուն, իրավասու մարմինները յուրաքանչյուր առանձին դեպքի համար կարող են ստեղծել այդպիսի միջնորդ դատարան, որին վստահվում է մասնագիտական կարծիք տալ կրկնակի հարկումը բացառելու մեթոդի վերաբերյալ: Այդ դատարանը կարող է ստեղծվել միայն այն դեպքում, եթե շահագրգիռ կողմները նախապես, առանց որևէ վերապահումների կամ պայմանների, հրաժարվեն իրենց պետությունների դատարաններում ընթացքի մեջ գտնվող դատավարությունից:

Միջնորդ դատարանը պետք է բաղկացած լինի երեք անդամներից, որոնք նշանակվում են հետևյալ կերպ. յուրաքանչյուր իրավասու մարմին նշանակում է մեկ անդամի, իսկ այդ երկու անդամները փոխադարձ համաձայնությամբ նշանակում են նախագահ, որը պետք է ընտրվի յուրաքանչյուր Պայմանավորվող պետության կամ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) այլ անդամ պետության անկախ փորձագետներից:

Միջնորդ դատարանը, հայտնելով իր կարծիքը, պետք է կիրառի սույն Կոնվենցիայի դրույթները և միջազգային իրավունքի սկզբունքները՝ հաշվի առնելով Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությունը: Միջնորդ դատարանը կհաստատի ընթացակարգի իր սեփական կանոնները:

Շահագրգիռ անձը կարող է դիմումի հիման վրա լսվել կամ ներկայանալ միջնորդ դատարան, իսկ դատարանի պահանջի դեպքում այդպիսի անձը պետք է անձամբ ներկայանա դատարան կամ այդ նախագահի համար նշանակի ներկայացուցիչ:

6. Միջնորդ դատարանը պետք է կարծիքը հայտնի գործը ներկայացվելուց հետո վեց ամսվա ընթացքում: Միջնորդ դատարանը պետք է դեկավարվի իր անդամների ճայների մեծամասնությամբ:

Յուրաքանչյուր իրավասու մարմնի կողմից նշանակված անդամների քվեարկության հետ կապված տարածայնության դեպքում նախագահի ճայնը վճռորոշ է:

Միջնորդ դատարանի կողմից մասնագիտական կարծիքը արտահայտվելուց հետո վեց ամսվա ընթացքում իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ պետք է միջոցներ ձեռնարկեն հարկային վիճահարույց հարցի պատճառը վերացնելու նպատակով: Ձեռնարկված միջոցները կարող են նաև չհամապատասխանել միջնորդ դատարանի արտահայտած կարծիքին: Եթե միջնորդ դատարանի կողմից կարծիքը արտահայտվելուց հետո վեց ամսվա ընթացքում իրավասու մարմինները համաձայնության չեն գալիս հարկային վիճահարույց հարցի պատճառը վերացնելու վերաբերյալ, ապա նրանք պետք է ենթարկվեն այդ կարծիքին և իրականացնեն այն:

դատավարության ծախսերը հավասարապես պետք է բաշխվեն Պայմանավորվող պետությունների միջև:

Հոդված 27 Տեղեկության փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի կամ Պայմանավորվող պետությունների կամ դրանց վարչատարածքային կամ վարչական միավորների կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված բոլոր տեսակի և բնույթի հարկերի առնչությամբ ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար՝ այնքանով, որքանով դրանցից առաջացած հարկումը չի հակասի սույն Կոնվենցիային, ինչպես նաև կկանխի հարկումից խուսափելը:

Տեղեկության փոխանակումը 1-ին և 2-րդ հոդվածներով չի սահմանափակվում: Սի Պայմանավորվող պետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն պետք է գաղտնի պահպի այնպես, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության սահմաններում ստացված տեղեկությունը, և կարող է հայտնվել միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք գրադաւում են առաջին նախադասության մեջ նշված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկություններն օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները դոնքաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներում:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես մի Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությամբ կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց, կամ՝ տեղեկություն, որի բացահայտումը հակասում է պետական քաղաքականությանը (հասարակական կարգին):

Հոդված 28 Դիվանագիտական ներկայացուցիչներ և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցիչներին և հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներին միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հասուլ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնություններին:

Հոդված 29 Փոխասուցում Ա

1. Պայմանավորվող պետությունում աղբյուրի մոտ գանձված հարկերը կփոխառություն կամ այն Պետության պահանջով, որի ռեզիլենտն է այդ հարկատուն, եթե նշված հարկերը հավաքելու իրավունքի վրա ազդում են սույն Կոնվենցիայի դրույթները:

2. Փոխառություն պահանջները պետք է ներկայացվեն այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, որը պարտավորվել է կատարել փոխառություն: Փոխառություն պահանջները պետք է ուղեկցվեն այն Պայմանավորվող պետության, որի ռեզիլենտն է հանդիսանում հարկատուն, պաշտոնական վկայականով, որը կհավաստիացնի այն պայմանների առկայության մասին, որոնք անհրաժեշտ են սույն Կոնվենցիայով նախատեսված թույլտվություններից օգտվելու իրավունքի համար:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխամաճայնությամբ պետք է որոշեն սույն հոդվածի կիրառման եղանակը՝ սույն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Գլուխ VI Եզրափակիչ դրույթներ

Հոդված 30 Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան պետք է վավերացվի, և վավերագրերը պետք է փոխանակվեն հնարավորին չափ շուտ:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակման օրվանից, և դրա դրույթները կգործեն՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված գումարների նկատմամբ,

բ) եկամտի և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող ցանկացած հարկային ժամանակահատվածի համար վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

Հոդված 31 Գործողության դադարեցումը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա մինչև Պայմանավորվող պետություններից մեկի կողմից դրա գործողության դադարեցվելը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հինգ տարի հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն վեց ամիս առաջ դիվանագիտական ուղիներով դադարեցման մասին ծանուցում ներկայացնելով: Այդ դեպքում սույն Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո

ստացված գումարների նկատմամբ,

թ) Եկամտի և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ դադարեցման մասին ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող ցանկացած հարկային ժամանակահատվածի համար վճարման ենթակա հարկերի նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Հռոմ քաղաքում 2002թ. հունիսի 14 -ին, երկու բնօրինակով, հայերեն, իտալերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարագոր են:

Մեկնաբանման կամ կիրառման ժամանակ տարածայնության դեպքում նախապատվություն է տրվում անգլերեն տեքստին:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Խտալիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելու կանխելու մասին Կոնվենցիայի:

Հայաստանի Հանրապետության կառավարության և Խտալիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելու կանխելու մասին այսօր կնքված Կոնվենցիան ստորագրելու պահին ներքոստորագրյալները համաձայնեցին, որ հետևյալ լրացուցիչ դրույթները կկազմեն նշված Կոնվենցիայի անքաղաքական մասը:

Համաձայնեցված է, որ՝

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար որոշումներ կայացնելու լիազորությամբ օժտված դեկավարության վայրը որոշելիս պետք է հաշվի առնվի նաև այն վայրը, որտեղ անձը (ոչ ֆիզիկական անձը) իրականացնում է հիմնական և կարևոր գործունեություն:

2. 2-րդ հոդվածի 3-րդ կետի «ք» ենթակետի առնչությամբ. եթե Խտալիան ապագայում մտցնի գույքի հարկ, սույն Կոնվենցիան կիրառվի այդպիսի հարկի նկատմամբ, և կրկնակի հարկումը կրացառվի համաձայն սույն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի դրույթների:

3. 4-րդ հոդվածի 1-ին կետի առնչությամբ. «Պայմանավորվող պետության ռեզիդենտ» արտահայտությունը ներառում է նաև այդ Պետությունը և որևէ վարչատարածքային կամ վարչական միավոր կամ տեղական իշխանության մարմին:

4. 7-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ. «մշտական հաստատության նպատակների համար կատարված ծախսեր» տերմինը նշանակում է այն ծախսերը, որոնք անմիջապես կապված են մշտական հաստատության գործունեության հետ:

5. 7-րդ հոդվածի 3-րդ կետի առնչությամբ. չի թույլատրվի գումարների որևէ նվազեցում, եթե մշտական հաստատության կողմից ձեռնարկության գրասենյակի դեկավարին կամ ձեռնարկության այլ ցանկացած գրասենյակին վճարված է որևէ գումար (այլ, քան փաստացի ծախսերի փոխհատուցում) պատենտների կամ այլ իրավունքների օգտագործման համար՝ ռոյալթի, վարձատրությունների կամ այլ նմանատիպ վճարումների տեսքով, մատուցված առանձին ծառայությունների կամ կառավարման համար կոմիսիոն վճարների տեսքով կամ բացառությամբ բանկային հաստատության դեպքի՝ մշտական հաստատությանը վճարված դրամական գումարների տոկոսների տեսքով։ Նմանապես, մշտական հաստատության եկամուտները հաշվարկելիս որևէ հաշվարկ չի արվի այն գումարների համար (այլ, քան փաստացի ծախսերի փոխհատուցում), որոնք վճարված են մշտական հաստատության կողմից ձեռնարկության գրասենյակի դեկավարին կամ ձեռնարկության այլ ցանկացած գրասենյակին՝ պատենտների կամ այլ իրավունքների օգտագործման համար՝ ռոյալթի, վարձատրությունների կամ այլ վճարումների տեսքով կամ կոմիսիոն վճարների տեսքով, մատուցված

առանձին ծառայությունների կամ կառավարման համար կամ, բացառությամբ բանկային հաստատության դեպքի, ձեռնարկության դեկավարին կամ ձեռնարկության պահին գումարների համար կամ այլ թյան այլ

ցանկացած գրասենյակին վճարված դրամական գումարների տոկոսների տեսքով:

6. 8-րդ հոդվածի առնչությամբ. միջազգային փոխադրումներում ծովային նավերի կամ օդանավի շահագործումից ստացվող եկամուտները կներառեն.

ա) միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային նավերի կամ օդանավի՝ առանց անձնակազմ վարձակալությունից ստացված շահույթը,

բ) բեռնարկերի օգտագործումից կամ վարձակալությունից ստացված շահույթը, եթե այդ շահույթը հատուկ է միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային նավերի կամ օդանավի շահագործումից ստացված այլ շահույթին:

7. 10-րդ հոդվածի 4-րդ կետի, 11-րդ հոդվածի 5-րդ կետի, 12-րդ հոդվածի 4-րդ կետի, 22-րդ հոդվածի 2-րդ կետի առնչությամբ. դրանցում ընդգրկված վերջին նախադասությունը չպետք է մեկնարանվի որպես սույն Կոնվենցիայի 7-րդ և 14-րդ հոդվածներում ընդգրկված սկզբունքներին չհամապատասխանող:

8. 19 - րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի առնչությամբ. Իտալիայի արտաքին առևտրական հաստատությանը (I.C.E) և Իտալիայի քանին, ինչպես նաև Հայաստանի համապատասխան հաստատություններին մատուցված ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարված վարձատրության նկատմամբ տարածվում են պետական ծառայության վերաբերյալ դրույթները:

9. 29-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները չեն խոչընդոտում Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններին՝ փոխադարձ համաձայնությամբ իրականացնելու սույն Կոնվենցիայով նախատեսված սահմանափակումների կիրառման այլ պրակտիկա:

10. Սույն Կոնվենցիայում ոչինչ չի խոչընդոտում յուրաքանչյուր Պայմանավորվող պետությանը կիրառել իր ներքին հարկային օրենսդրությունը՝ հարկումից խուսափելով կանխելու և հարկումը բացառելու համար:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Լրացուցիչ արձանագրությունը:

Կատարված է Հռոմ քաղաքում 2002 թ. հունիսի 14 -ին, երկու բնօրինակով, հայերեն, իտալերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարագոր են:

Մեկնարանման կամ կիրառման ժամանակ տարածայնության դեպքում նախապատվություն է տրվում անգլերեն տեքստին:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2008թ. մայիսի 5-ից: